ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՅԵՑ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ԴԵՐԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆԸ

Նոյեմբերի 30-ին, Մայր Տաճարի օծման 1700-ամյա հոբելյանական արարողությունների շրջանակում, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ընդունեց Գեղարքունիքի թեմի ուխտավորներին՝ առաջնորդությամբ թեմի առաջնորդական տեղապահ Տ. Դերենիկ վարդապետ Դավթյանի:

«Սիրելի ուխտավորներ Գեղամա աշխարհի, այսօր հավաքվել ենք այստեղ՝ մեկ անգամ ևս խոնարհվելու Իջման Սուրբ Սեղանի առջև: ...Այսօր էլ մեր հույսն ու ապավենը մեր հավատքն է, այդ աներեր հավատքի փունը՝ հայոց սրբություն սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: 17 դար շարունակ տարբեր փորձությունների միջով է անցել Ս. Էջմիածինը, բայց կարողացել է պահպանել իր ինքնությունը, հավատքը, ավանդությունները և, վերջապես, իր խոստովանությունը հանդեպ Հիսուս Քրիստոսի»,- նշեց Հայր Սուրբն իր քարոզի մեջ:

Ս. Պատարագին մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ: Ուխտավորների թվում էին Գեղարքունիքի մարզպետը, մարզային իշխանությունների այլ ներկայացուցիչներ:

ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՅԵՑ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎ Տ. ՕՇԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՅՈՒԼԳՅՈՒԼՅԱՆԸ

Դեկտեմբերի 21-ին, Մայր Տաճարի օծման 1700-ամյա հոբելյանական արարողությունների շրջանակում, Մայր Աթոռ Ս. Էջմիածին էին եկել մի խումբ հնդկահայեր՝ առաջնորդությամբ հոգևոր հովիվ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանի:

«Հոգեկան մեծ ուրախությամբ եկել ենք հեռավոր Հնդկաստանից, պատմական հնդկահայոց այն մեծ գաղութից, որ նույնիսկ հպարտությամբ կարող ենք ասել, որ Ս. Նազարեթ հայոց եկեղեցին ամենահին քրիստոնեական կառույցն է ամբողջ Կալկաթայի մեջ: Այսօր այն նույնպես կանգուն է, որովհետև իր հայացքը միշտ ուղղել է դեպի Ս. Էջմիածինը, որովհետև միշտ սնվել է Ս. Էջմիածնով, իր կապը միշտ հաստատուն է պահել Ս. Էջմիածնի հետ»,- նշեց Հայր Սուրբն Ուխտի Պատարագի իր քարոզում (տե՛ս էջ 30):

Ս. Պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Հնդկաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Բայբուրդյանը, ծխական խորհրդի ատենապետ Սոնիա Ջոնը և հայ համայնքի անդամներ:

Սրբազան արարողությունից հետո ուխտավորներին ընդունեց Վեհափառ Հայրապետը: